

Սակայն պէտք է պզտիկ սրբազրու-
թիւն ծը ընել: Հակառակ անոր որ 1633ին
Գրիգոր Կեսարացիին վերջնապէս աթոռը
զրաւելովն է որ Զաքարիա Վանեցիի ան-
կուժը նուիրագործուած կ'ըլլար, սակայն
արդէն 1632 Հոկտ. 4էն բաւական առաջ
պէտք էր Զաքարիա տապալած ըլլար, վա-
սընդի նոյն թուականին Բրոքականտի ժո-
ղովին նիստին կը հաղորդուի թէ թուր-
քերը Կ. Պոլսոյ Զաքարիա պատրիարքը
պաշտօնանկ ըրած են (Գալէմփեարեան,
Կենսագրութիւնէր, Ա. 306-307):

Արդարեւ փաստեր կան թէ Զաքարիայի
անկուժը երկար պայքարներու արդիւնք
եղած է:

1631-1632 թուականներուն « յորժամ
զԶաքարէն (Զաքարիա Վանեցիին) Հստանկօղ-
ցիի եւ դրսեցիի, որ շատ մեծ ջանիւք մեկ ամ
դասերով հազիւ կարացին ի միջոյ պատրիարք ա-
նունէն համեղ վասն բազում յայպակսնութեանն
եւ նեխութեանն եւ գրեցին գլխոյ(*) ու պարտքն
ի յանուն Կարսպէս վարդապետին, որ ինքն թուա
կարծիք եւ կռւման չիք ունեցով եւ ի հեռի աշ-
խարհի գոչով եւ յորժամ շուա զայս գործ՝ թե
մօտեհաս կր, այլ հեռացաւ: Թե որչափ կնքով
նամակներ, կողկողագին պաղասանփներ դրկե-

(1) Կարգա՛ւ մր = հրաման: